ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ «ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ» ԹԵՄԱՅՈՎ

Հայոց ցեղասպանությունը մեր ժողովրդի չսպիացող վերքն է: Թեև անցած հարյուրամյակի ընթացքում այդ հանցագործությունը ճանաչել ու դատապարտել են տարբեր երկրների խորհրդարաններ և միջազգային կազմակերպություններ՝ այն որակելով իբրև ցեղասպանություն և մատնանշելով հանցագործ պետությանը, այնուամենայնիվ, Հայոց ցեղասպանությունը գործած պետությունն առ օրս անպատիժ է, իսկ ոճրագործության հետևանքները հաղթահարված չեն:

Հայաստանի անկախության հռչակումից հետո ակնհայտ դարձավ, որ միջազգային ճանաչման ու դատապարտման մարտավարությունը թեև անհրաժեշտ, բայց բավարար չէ միջազգային իրավունքի սուբյեկտ հանդիսացող հայկական պետության և իրավազրկված հայ ժողովրդի շահերը պաշտպանելու համար: Որպես Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման անշրջելի գործընթացի տրամաբանական շարունակություն՝ օրակարգային են գործած ոճրագործության համար թուրքական պետությանը քաղաքական պատասխանատվության ենթարկելու պահանջը և ցեղասպանության հետևանքով հայրենազրկված, մարդկային ու մշակութային ժառանգության անդառնալի կորուստ և բարոյահոգեբանական, նյութական ու ֆինանսական ահռելի վնասներ կրած հայ ժողովրդին հատուցելու հիմնախնդիրը: 2015 թ. հունվարի 29-ին ընդունված «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագրով» պաշտոնական հիմքի վրա դրվեց Հայաստանի և հայ ժողովրդի միասնական կամքը՝ հասնելու Հայոց ցեղասպանության փաստի համաշխարհային ճանաչմանը և այդ ոճրագործության հետևանքների վերացմանը: Ըստ այդմ, անհրաժեշտ է մշակել թուրքական պետությանը ներկայացվելիք իրավական հիմնավոր ու ամբողջական պահանջների թղթածրարը՝ այն դիտելով որպես անհատական, համայնքային և համազգային իրավունքների ու օրինական շահերի վերականգնման մեկնարկ:

Այսպիսով, Հայոց ցեղասպանության հիմնախնդիրը պատմագիտական ոլորտից տեղափոխվում է իրավական – գործնական հարթություն, որտեղ առանցքայինը հայ ժողովրդի դեմ գործած ցեղասպանության համար հանցագործ պետության հատուցման հիմնախնդիրն է:

Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման մարտավարությանն անցնելու, դրա հայեցակարգի մշակման գործում նշանակալի է հայ գիտնականների մասնակցությամբ տեղի ունեցած հանրապետական և միջազգային գիտաժողովնե-

րում Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման, այդ հանցագործության մեջ մեղադրվող պետության քաղաքական պատասխանատվության և հատուցման հիմնախնդիրների գիտական քննարկումների դերը: Այս ուղղությամբ կատարված նոր ու կարևոր քայլ էր 2016 թ. նոյեմբերի 22–23-ին ՀՀ ԳԱԱ-ում տեղի ունեցած միջազգային գիտաժողովը՝ «Հայոց ցեղասպանությունը և հատուցման հիմնախնդիրը» խորագրով: Այն նախաձեռնել էին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան և Երևանի պետական համալսարանը: Գիտաժողովի կազմակերպմանն ու աշխատանքներին ակտիվորեն ներգրավված էին մասնագետներ ակադեմիական այն բոլոր ինստիտուտներից, որոնց գիտահետազոտական գործունեությունն ուղղակի կամ անուղղակի առնչություն ունի Հայոց ցեղասպանության հետևանքների, դրա ճանաչման, դատապարտման ու հատուցման հիմնախնդիրներին, մասնավորապես՝ Պատմության, Արևելագիտության, Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության, Հնագիտության և ազգագրության, Արվեստի, Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի, Մ. Աբեղյանի անվ. գրականության, Հր. Աճառյանի անվ. լեզվի, Երկրաբանական գիտությունների ինստիտուտներից, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնից, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտից, ինչպես նաև՝ ԵՊՀ-ից, Հայաստանի ազգային արխիվից, Հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ-թանգարանից՝ Մատենադարանից, Արևմտահայաստանի և արևմտահայության հարցերի ուսումնասիրման կենտրոնից, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանից, Վանաձորի պետական մանկավարժական համալսարանից, «Մոդուս վիվենդի» կենտրոնից: Գիտաժողովին մասնակցելու հրավերն ընդունել էին և զեկուցումներով հանդես եկան հյուրեր Ռուսաստանից, Լեհաստանից ու Ֆրանսիայից:

Խորհրդանշական է, որ գիտաժողովն իր աշխատանքը սկսեց նոյեմբերի 22-ին: 96 տարի առաջ՝ 1920 թ. պատմական այդ օրն է ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնը կայացրել Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի միջև պետական սահմանի վերաբերյալ իր Իրավարար վճիռը, որը հայ ժողովրդի արդար իրավունքները փաստող անբեկանելի միջազգային-իրավական ուժ ունեցող փաստաթուղթ է:

Գիտաժողովն ուներ հագեցած օրակարգ: Լիագումար նիստում բացման խոսքով հանդես եկավ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը*: Գիտաժողովի մասնակիցներին ողջույնի խոսք հղեցին ԵՊՀ ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ* Ա-բրամ Սիմոնյանը*, ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս* Աշոտ Մելքոնյանը *և Արևելագիտության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս* Ռուբեն Սաֆրաստյանը*: Այնուհետև, լսվեց 4 զեկուցում: Գիտնական-փորձագետ* Էվա Սալ-կեվիչ-Մյուներլինը *(Լեհաստան) ներկայացրեց Հայոց ցեղասպանության վնասների հատուցման հարցի քննարկման միջազգային-իրավական հնարավորություններն ու*

առանձնահատկությունները: ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության բաժնի վարիչ, պ. գ. թ., դոցենտ Արմեն Մարուքյանի *զեկուցումը նվիրված էր Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հնարավոր ճանապարհային քարտեզի ուրվագծման հարցին: Գիտնական-փորձագետ* Հարություն Խաչատուրյանը *(Ֆրանսիա) հատուցման հիմնախնդիրը ներկայացրեց Հայոց ցեղասպանության մասին պատմական հիշողության և թուրքական պաշտոնական տեղեկատվության տեսանկյունից: «Մոդուս վիվենդի» կենտրոնի հիմնադիր և նախագահ* Արա Պապյանի *զեկուցումը նվիրված էր Վուդրո Վիլսոնի Իրավարար վճռի արժևորմանը՝ որպես Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության վերականգնման իրավական հիմք:*

Գիտաժողովի օրակարգում ընդգրկված մյուս՝ թվով 28 զեկուցումները, խմբավորվել էին և կարդացվեցին հետևյալ բաժանմունքների նիստերում՝ «Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կրած ֆինանսական և գույքային կորուստները» (նիստի նախագահողներ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Վլադիմիր Հարությունյան*, պ. գ. դ., պրոֆեսոր* Էդիկ Մինասյան*, 6 զեկուցում), «Ցեղասպանության հետևանքների հաղթահարման իրավական խնդիրները և հայ ժողովրդի կրած մշակութային-քաղաքակրթական կորուստները» (նիստի նախագահողներ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ* Արարատ Աղասյան, Պավել Ավետիսյան*, 6 զեկուցում), «Հայոց ցեղասպանության և հատուցման խնդրի արտացոլումը գրականության մեջ» (նիստի նախագահողներ՝ բ. գ. դ.* Վարդան Դևրիկյան, *բ. գ. դ., պրոֆեսոր* Արծրուն Ավագյան*, 6 զեկուցում), «Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կրած ժողովրդագրական կորուստները» (նիստի նախագահողներ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս* Գևորգ Պողոսյան, Արմեն Մարուքյան*, 5 զեկուցում), «Հայոց ցեղասպանության պատմագիտական խնդիրներ» (նիստի նախագահողներ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս* Ռուբեն Սաֆրաստյան*, պ. գ. թ.* Մհեր Հովհաննիսյան*, 5 զեկուցում): Բաժանմունքների նիստերի ընթացքում տեղի էր ունենում նաև զեկուցումներում հնչած մտքերի ու տեսակետների քննարկում:*

Գիտաժողովն իր աշխատանքներն ամփոփեց լիագումար նիստով, որի ընթացքում լսվեցին բաժանմունքների ղեկավարների հաղորդումները քննարկումների արդյունքների մասին: Եզրափակիչ խոսքով հանդես եկավ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար Յուրի Սուվարյանը: Նա բարձր գնահատեց Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հայեցակարգը մշակելու ուղղությամբ հայ գիտնականների գործադրած ջանքերը՝ նշելով, որ դրանց արդյունքները հիմք են ապահովում հայկական պետության համար՝ հասնելու հատուցման խնդրի գործնական լուծմանը:

ԼԻԼԻԹ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ